ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ 2009

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շնորհակալություն Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) հետ աշխատելու համար: Մենք ներկայացնում ենք շահույթ չհետապնդող, անկախ մի հետազոտական կենտրոն, որը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագրերից մեկն է Հայաստանում: «Տվյալների նախաձեռնություն»-ը մեր տարեկան հետազոտությունն է, որն օգնում է մեզ ավելի լավ հասկանալ մեր երկրում մարդկանց կարծիքներն ու պայմանները:
Ի հավելում Տվյալների նախաձեռնություն 2009 հարցաթերթի ցուցումներին, այս փաստաթուղթը Ձեզ ավելի շատ տեղեկատվություն կտա հարցվողին ուղղվող հարցերի նպատակների մասին, ինչպես նաև տ/տ-ն և հարցվողի ընտրության կանոնների վերաբերյալ: Շատ կարևոր է այս հրահանգներին հետևելն, որովհետև այն օգնում է մեզ երաշխավորել արդյունքների հավաստիությունը:

1. ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (Տ/Տ) ԵՎ ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստան և Վրաստան

Դաշտ դուրս գալուց առաջ Ձեր խմբավարը Ձեզ կտա ընտրված տնային տնտեսությունների ցանկը՝ կացարանների ճշգրիտ հասցեներով, որտեղ տվյալ տ/տ ապրում է, կամ (գյուղական համայնքներում կամ այն դեպքերում, երբ հասցեն հայտնի չէ) տ/տ-ն գլխավորի անունը: Խնդրում ենք այցելել նշված տ/տ-ն և հարցաթերթի տիտղոսաթերթում նշված տեքստի միջոցով ներկայացնել ինքներդ Ձեզ և ուսումնասիրության նպատակը, այնուհետև սկսել հարցազրույցը:

Այն դեպքում, երբ տ/տ-ն առաջին այցի ժամանակ կացարանը փակ էր կամ հարցվողը չներկայացավ ինչ-ոչ պատճառներով (բացառությամբ, երբ հարցվողը հրաժարվեց մասնակցել հարցմանը) Դուք կարող եք կատարել **մինչև երեք** այցելություն նախքան չպատասխանող գրանցելը: Յուրաքանչյուր այսպիսի այցելության մասին պետք է համապատասխան նշումներ կատարեք տ/տ-ն տիտղոսաթերթում (այն դեպքում, երբ տ/տ-ն առաջին այցելության ժամանակ հարցումն ամբողջությամբ չանցկացվեց գրանցել **V6, V7**, **V8** ինչպես նաև **NR1** փոփոխականները, իսկ **NR2** փոփոխականը գրանցել այն դեպքում, երբ երկրորդ այցելության ժամանակ հարցումն ամբողջությամբ չլրացվեց):

Հարցազրույց անցկացնելու համար տ/տ-ն չափահաս անդամին պետք է ընտրել ըստ **ՔԻՇԻ Աղյուսակի:** Խնդրում ենք ուշադիր հետևել տիտղոսաթերթի հրահանգներին, այլապես ձախողումը կհանգեցնի հարցաթերթի անվավեր համարվելուն: Այդ իսկ պատճառով խնդրում ենք լինել շատ ուշադիր:

Եթե այնուամենայնիվ տ/տ-ն (կամ ընտրված հարցվողը) հրաժարվում է մասնակցել, պետք է լրացնել **ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐԻ թերթիկը** (տիտղոսաթերթի վեջում): Նույն

թերթիկը պետք է լրացնել այն դեպքում, երբ բոլոր թույլատրելի այցելություններից հետո հարցազրույցը ինչ-որ պատճառներով ձախողվում է: **Դուք չեք կարող փոխարինել ընտրված տ/տ-ն այլ տ/տ-ով,** ինչպես նաև **Դուք չեք կարող փոխարինել ընտրված հարցվողին այլ հարցվողով:**

Ադրբեջան

2. ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդհանուր նկատառումներ

Տվյալների նախաձեռնություն 2009 հարցաթերթը բաղկացած է 8 բաժիններից, որոնցից 5-ը առանցքային բաժիններ են, իսկ 3-ը շրջանցային բաժիններ: Հարցաթերթի վերջում կցված է Զրուցավարի գնահատման թերթիկ: Հարցաթերթը նաև պարունակում է առանձին տիտղոսաթերթ, որի մաս է կազմում **ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐԻ թերթիկը**:

Խնդրում ենք հարցաթերթը լրացնել գրիչով, այլապես մատիտով լրացված հարցաթերթերը անվավեր կհամարվեն:

Հարցաթերթում հարցերի տեքստերը (այսինքն՝ այն տեքստը, որով դուք դիմում եք հարցվողին) տպագրված են **ընդգծված (հաստ) փոքրատառերով**: Դաշտային աշխատանքների ժամանակ բոլոր հարցվողների հետ հարցազրույց վարելիս պետք է ճշգրտորեն օգտագործել հարցաշարում **առկա ճիշտ նույն ձևակերպումները:** ԱՆՊԱՅՄԱՆ կարդացեք հարցերի տեքստերը, պարտադիր չէ դրանք անգիր անել, կարող եք հարցերն ընթերցել հարցաշարից:

Հարցվողի համար չպետք է կարդաք հարցաթրթի բաժինների անունները, որոնք մեծատառերով են տպագրված: Բարձրաձայն կարդացեք յուրանքանչյուր բաժնի վեջում և/կամ սկզբում **ընդգծված (հաստ) փոքրատառերով** տպագրված նախադասությունները: Ձեր աշխատանքը հեշտացնելու համար են բաժինների անունները տպագրված մեծատառերով:

Մենք ոչ թե ստուգում կամ ինչ-որ իմաստով փորձում ենք գնահատել հարցվողներին, այլ մեր ուզածն ընդամենը նրանց կարծիքն իմանալն է. այնպես որ, խնդրում ենք, մի փորձեք որևէ կերպ օգնել նրանց, այլ պարզապես ամեն ինչ արեք, որպեսզի օգնեք նրանց՝ արտահայտել իրենց սեփական կարծիքները: Երբեք եզրակացություններ մի արեք, այլ լսեք նրան և օգնեք արտահայտել իր սեփական կարծիքը, ինչպիսին էլ այն լինի:

Հարցվողները չպետք է նայեն հարցաթերթին ոչ հարցազրույցից առաջ, ոչ դրա ընթացքում և ոչ էլ դրանից հետո: Նրանք պետք է լսեն Ձեր ձևակերպած հարցերը և պատասխանեն դրանց: Հարցվողի խնդրանքի դեպքում դուք կարող եք կրկնել հարցը՝ օգտագործելով հարցաթերթում առկա ճիշտ նույն ձևակերպումները. ոչ մի դեպքում ձևակերպումների փոփոխություն չի թույլատրվում: Այն դեպքում, երբ դիտողություններ ունեք հարցաթերթի ձևակերպումների վերաբերյալ, կարող եք այդ մասին խորհրդակցել Ձեր խմբավարի, ՀՌԿԿ-ի Հայաստանյան գրասենյակի հետ կամ նշումներ կատարել հարցաթերթի լուսանցքում. 2009 դաշտային աշխատանքների ժամանակ ոչ մի դեպքում ձևակերպումների փոփոխություններ չի թույլատրվում և յուրաքանչյուր հարցաթերթ պետք է լրացվի ըստ հրահանգների:

Վստահացեք, խնդրեմ, որ հարցվողը **չի նայում հարցաթերթի մեջ**. հարցվողը չպետք է կարողանա կարդալ այն, ինչ տպագրված է հարցաթերթում: Որպեսզի հարցվողը

չկարողանա նայել հարցաթերթի մեջ, հարցազրույցի ընթացքում տեղավորվեք այնպես, որ հարցվողը նման հնարավորություն չունենա:

Չի թույլատրվում հարցաշարի մեջ եղած որևէ հարց կամ բառ բացատրել սեփական հայեցողությամբ, նույնիսկ երբ լիովին վստահ եք այդ հարցում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրվում է ըստ հրահանգների: Մյուս բոլոր դեպքերում, եթե հարցվողը չի հասկանում հարցը, դանդաղորեն կրկնեք այն՝ օգտագործելով հարցաթերթի բառերը՝ առանց բացատրություններ տալու: Սա շատ կարևոր է արդյունքների համեմատելիությունն ապահովելու տեսակետից:

Երբ հարցերի տեքստում տեսնեք ընդգծված բառեր, բարձրաձայն կարդալիս տվյալ հարցը ընդգծված կարդացեք:

Հարցաթերթում մանրամասն հրահանգներ կան այն մասին, թե յուրաքանչյուր հարցի վերաբերյալ Ձեզնից ինչ է ակնկալվում: Այս հրահանգները տպագրված են մեծատառերով և սկսվում են [ԶՐՈՒՑԱՎԱՐ] բառով: ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ՄԻ ԸՆԹԵՐՑԵՔ հրահանգները, պարզապես ուշի-ուշով հետևեք դրանց: Այդ հրահանգների չկատարման հետևանքով Ձեր ներկայացրած հարցաթերթը կարող է անվավեր ճանաչվել:

Հարցաթերթի մեջ հարցվողների պատասխանները ծածկագրելու համար օգտագործվում են կամ թվերը կամ լատինական այբուբենի տառերը: Մեծամասամբ թվերն են օգտագործվում, բայց մի քանի դեպքերում (երբ դրա անհրաժեշտությունը ծագում է տվյալների մուտքագրման պատճառով) թվերի փոխարեն օգտագործվում են լատինական տառերը: Տառերի հետ պետք է աշխատել ճիշտ նույն ձևով, ինչ՝ թվերի հետ, այսինքն՝ պարզապես շրջանակի մեջ առեք հարցվողի պատասխան(ներ)ին համապատասխանող ծածկագիրը (կամ ծածկագրերը՝ եթե կիրառելի են):

Հարցաթերթը լրացնելիս «Չգիտեմ» տարբերակի համար օգտագործեք «98» ծածկագիրը, իսկ «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակի համար՝«99» ծածկագիրը: Այդ տարբերակները հայտնի չեն (և չպետք է հայտնի լինեն) հարցվողներին:

Երբ ցանկանում ենք հարցվողը տեսնի հարցի պատասխանները, ապա նրան տալիս եք ՔԱՐՏ-ը, որով նրանք իրենց կարծիքին համապատասխան պատասխան(ներ) են ընտրում:

Երբ ասում ենք՝ «ՔԱՐՏ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ», ապա ակնկալվում է, որ դուք հարցվողին ցույց կտաք համապատասխան հարցի համարով քարտը: Բացի այդ, կարող եք կարդալ այդ քարտի վրա տպագրված տարբերակները, եթե հարցվողը խնդրի այդ մասին: Սակայն հիշեք, որ «Չգիտեմ», «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակները քարտում չկան, «Այլ» տարբերակը կա միայն բացառիկ դեպքերում, և դուք երբեք այն տարբերակները որոնցում դրանք չկան, չպետք է բարձրաձայն կարդաք: Ոչ մի պարագայում չի կարելի որևէ բան փոխել կամ ավելացնել այն ամենին, ինչ տպագրված է քարտում: Սա խիստ կարևորվում է ՏՆ 2009-ի շրջանակում անցկացվող մի քանի հազար հարցազրույցների արդյունքների համեմատելիությունն ապահովելու տեսակետից:

ՔԱՐՏ օգտագործելու դեպքում հավաստիացեք, որ հարցվողները կարդան ՔԱՐՏՈՒՄ առկա բոլոր տարբերակները և միայն դրանից հետո պատասխանեն հարցին: Մի ընդունեք հարցվողի պատասխանը, մինչև չկարդա ՔԱՐՏ-ում առկա բոլոր տարբերակները:

Խնդրում ենք հավաստիանալ, որ հարցվողները քարտերի վրա չգրեն կամ շրջանակներ չանեն, որովհետև քարտերը ենթակա են օգտագործման բոլոր հարցվողների կողմից, ում հետ հարցազրույց եք վարելու, և ամեն անգամ, երբ դուք հարցվողին քարտ եք տալիս, այն պետք է լինի մաքուր և առանց որևէ նշումների:

Երբ հրահանգում գրված է՝ «ԿԱՐԴԱԼ ԲԱՐՁՐԱՁԱՅՆ» , ապա ձեզանից պահանջվում է բարձրաձայն կարդալ տրված տարբերակները, **բացի** «Այլ», «Չգիտեմ» և «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակներից: Հարցվողի պատասխանն ընդունելուց առաջ անպայման կարդացեք բոլոր տարբերակները: Դեպքերի մեծ մասում, «ԿԱՐԴԱԼ ԲԱՐՁՐԱՁԱՅՆ» հրահանգի ժամանակ դուք կարող եք ընդունել միայն մեկ պատասխան: Սակայն անպայման հետևեք հարցաթերթում տպագրված հրահանգներին և յուրաքանչյուր հարցի առնչությամբ ընդունեք թույլատրելի քանակությամբ տարբերակներ: Այդ հրահանգների չկատարման հետևանքով Ձեր ներկայացրած հարցաթերթը կարող է անվավեր ճանաչվել:

Հարցաթերթի աղյուսակներում պատկերված սլաքները ցույց են տալիս աղյուսակի լրացման ուղղությունը: Խնդրում ենք հավաստիանալ, որ հետևում եք այդ սլաքներին:

Եթե հարց է տրված կոնկրետ ԹՎԻ մասին (օրինակ, տնային տնտեսության անդամների), ապա մեր փնտրածը կոնկրետ թիվ է, ոչ թե թվային միջակայք: Եթե ի պատասխան հնչում է թվերի միջակայք (օր.՝ 12-15 ուսումնական տարի), ապա հարցվողին խնդրեք տալ մեկ թիվ, նույնիսկ եթե դա մոտավոր թիվ է: Հարցաթերթում միջակայք նշել **չի կարելի**:

Հարցաթերթում տպագրված /երկիր/ բառը հանդիպելիս նշեք այն երկրի անունը, որտեղ անց է կացվում հարցազրույցը՝ անկախ նրանից, թե որ լեզվով է հարցաթերթը:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Տիտղոսաթերթի առաջին էջի **V1**-ից **V4** փոփոխականները կլրացվեն ղեկավարի կողմից: Խնդրում ենք լրացնել Ձեր անձնական կոդը **V5**-ում, իսկ դաշտային աշխատանքների ընթացքում լրացնել **V6**-ը, **V7**-ը և **V8**-ը ըստ անհրաժեշտության: Եթե հարցազրույցՎ անցկացվում է տ/տ-ն առաջին այցելության ժամանակ, ապա լրացրեք միայն **V6**-ը և ՄԻ լրացրեք **V7**-ը և **V8**-ը: Նմանապես եթե հարցազրույցն անցկացվում է տ/տ երկրորդ այցելության ժամանակ, ապա լրացրեք **V6**-ը և **V7**-ը, իսկ **V8**-ը մնում է ազատ: ՄԻԱՅՆ այն դեպքում են լրացվում բոլոր երեք փոփոխականները (**V6**, **V7** և **V8**), երբ անհրաժեշտ է եղել երեք անգամ այցելել նույն տ/տ-ն:

Խնդրում ենք հավաստիանալ, որ տնային տնտեսության անդամին դիմելիս Դուք մտապահել եք հարցման նախաբանը՝ բացատրելով հարցման նպատակը և երաշխավորելով հարցվողի պատասխանների գաղտնիությունը:

Չափազանց կարևոր է, որ այս ուսումնասիրության շրջանակներում օգտագործված **տնային տնտեսության սահմանումը** ճիշտ եք հասկացել և' Դուք, և' տ/տ-ն այն անդամն՝ ում հետ զրուցում եք: Այդ սահմանումը նշված է տիտղոսաթերթի 1-ին էջում. «տնային տնտեսություն» ասելով ի նկատի ունենք մարդկանց, ովքեր ներկայումս ապրում են Ձեզ հետ ժամանակի մեծ մասը, անկախ նրանց գրանցումից, և ովքեր ունեն ընդհանուր եկամուտներ և ծախսեր: Այսպիսով, այս սահմանումը բացառում է ընտանիքի այն անդամներին, ովքեր ներկայում ապրում են արտասահմանում կամ երկրի այլ մասում: Տ/տ-ն անդամների թիվը **V9**-ում նշելիս տ/տ-ն անդամը չպետք է

հաշվի առնի ընտանիքի այն անդամներին, ովքեր ներկայում չեն ապրում նույն կացարանում, նույնիսկ եթե նրանք մոտիկ հարազատներ են (ամուսին/կին, ծնողներ և այլն): Մյուս կողմից տ/տ-ն անդամների թիվը հաշվելիս պետք է հաշվի առնել տ/տ բոլոր այն անդամներին, ովքեր ներկայում ապրում են այդ կացարանում **ներառյալ**` տ/տ-ն այն անդամին ում հետ զրուցում եք, մեծերին, փոքր երեխաներին և նորածիններին (եթե կան):

Տիտղոսաթերթի 2-րդ և 3-րդ էջերի **V10a** և **V10b** հարցերը և հետևյալ աղյուսակները տ/տ-ն անդամին (այսինքն` հարցվողին) ընտրելու համար են: Խնդրում ենք հետևել տիտղոսաթերթի ցուցումներին: Համոզվել որ, տ/տ-ն ընտրված անդամի կոդը նշել եք Աղյուսակ **V10**-ի վերջին սյունում: Այլապես հարցաթերթը անվավեր կճանաչվի:

Այն դեպքում, երբ հարցաթերթը լրացվում է տ/տ-ն առաջին այցելությամբ, ապա տիտղոսաթերթի 4-րդ/5-րդ էջի **ՉՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐԻ թերթիկը** չի լրացվում: Այլապես թերթիկը պետք է լրացվի համաձայն հրահանգների:

ՀԱՐՑԱԹԵՐԹ

ՀարցաթեñÃÇ տիտղոսաթերթից անպայման արտագրեք **երկրի ծածկագիրը** և **տնային տնտեսության նույնացման համարը**: Սա Ձեր պատասխանատվությունն է, և ոչ թե խմբավարի:

Խնդրում ենք անպայման տեղավորվեք բավականաչափ հանգիստ և հարմարավետ սենյակում: Խնդրում ենք համոզվեք, որ միայն հարցվողն է ներկա: Այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, Դուք պարտավորվում եք այդ մասին նշել հարցազրույցի վերջում. այնուամենայնիվ, ավելի լավ է համոզվել, որ միայն Դուք և հարցվողն է ներկա հարցմանը: Երբ դուք և հարցվողը նստած եք, Ձեզ համար հարմարավետ պայմաններ են ապահովված և հարցազրույցի լեզուն որոշված ու նշված է տիտղոսաթերթի **L1** հարցի տակ, սկսեք հարցազրույցը: Հատկացված տեղում (հարց **T1**) գրանցեք հարցազրույցի ամսաթիվը և դրա սկսելու ժամը (հարց **T2**): Չհետաձգեք նշել հարցազրույցը սկսելու ժամը, ամենայն հավանականությամբ դուք չեք հիշի ճշգրիտ ժամը, երբ ավարտեք հարցազրույցը:

Բաժին M: ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Ինչպես արդեն նշվել է**,** Դուք պարտավորվում եք կարդալ **ընդգծված (հաստ) փոքրատառերով** հարցերը: Այսպիսով, Մի կարդացեք բաժինների անվանումները, այլ սկսեք բաժնի վերնագրին հաջորդող նախադասությունից:

Այս բաժնում մենք միայն հետաքրքրված ենք լրատվամիջոցներով, այսինքն այն աղբյուրները, որոնցից հարցվողը տեղեկանում է Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին**:** Չնայած այն, որ հարցվողը կարող է դիտել բազմաթիվ հեռուստահաղորդումներ, բացի լրատվական հեռուստահաղորդումներից, մեզ այլ հեռուստահաղորդումներ չեն հետաքրքրում:

Բաժին N: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑ

Հարց N4

Այստեղ ի նկատի ունենք գումար պարտք վերցնել անհատից, ՈՉ թե բանկից կամ որևէ ֆինանսական հաստատությունից:

Հարց N7- N10
Այս հարցերում մենք միայն հետաքրքրված ենք արդյոք հարցվողի ընտանիքի անդամներից որևէ մեկը կամ մոտ ազգականը աշխատում է այս կազմակերպություններից որևէ մեկում, **անկախ** զբաղեցրած պաշտոնից: Մեզ հետաքրքրում է միայն այդ կազմակերպություններից որևէ մեկում աշխատելու, որևէ աշխատանք իրականացնելու փաստը. անկախ նրանից, Ã» հարցվողի ընտանիքի անդամը կամ մոտ ազգականը աշխատում է որպես տնօրեն, թե վարորդ, պատասխանը պետք է լինի «Այո» (կոդ ´1´):
Այն դեպքում, երբ հարցվողն ինքն է աշխատում այդ կազմակերպություններից որևէ մեկում, ապա շրջանակի մեջ վերցրեք կոդ ´1´ («Այո»):

Հարց N7
«Տեղական իշխանություն» ասելով ի նկատի ունենք գյուղական, քաղաքային կամ մարզային իշխանությունները. ցանկացաց իշխանություն, **բացառությամբ** ազգային (կենտրոնական) իշխանությունները, որոնք կառավարում են ամբողջ երկիրը:
Եթե հարցվողի մոտ ազգականը աշխատում է այդ իշխանություններից որևէ մեկում, ապա պատասխանը կլինի «Այո» (կոդ ´1´): Նույնը պատասխանը կլինի այն դեպքում ևս, երբ հարցվողի մոտ ազգականը աշխատում է քաղաքային կամ մայրաքաղաքային կառավարող գրասենյակներում:

ԲԱԺԻՆ J. Զբաղվածություն

Հարց J2
Դարձյալ, «աշխատում եմ» ասելով հասկանում ենք ոչ միայն որևէ գործատուի հետ գրավոր պայմանագրի վրա հիմնված պաշտոնական զբաղվածությունը, այլև տնային տնտեսության անդամի կողմից կատարվող որևէ տեսակի աշխատանք, այդ թվում՝ ոչ պաշտոնական պայմանավորվածությունները, որոնց համար նրան վճարում են: Այս ենթատեքստում ինքնազբաղվածությունը նույնպես համարվում է զբաղվածության ձև, որովհետև ինքնազբաղ մարդը նույնպես աշխատում և եկամուտ է ստանում: Այսպես, օրինակ, զարդեղենի առևտրականները, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղներն ու եկամուտ ստացողները նույնպես համարվում են «աշխատող»:

Հարց J3
Եթե հարցվողը մի քանի տեղ է աշխատում, ապա հարցրեք միայն նրա հիմնական աշխատավայրի մասին: Սովորաբար դա լինում է այն աշխատավայրը, որտեղ նա առավել մեծ գումար է վաստակում. այլ դեպքերում դա կարող է լինել նաև այն աշխատավայրը, որն առավել կայուն է, կամ որը համարվում է մշտական:
Ռեսպոնդենտը պետք է որոշի, որն է իր առաջնային աշխատանքը: Այստեղ կարելի է ընդունել միայն մեկ պատասխան:
Խնդրում ենք նաև հաշվի առնել, որ ինքնազբաղ անձանց երկու կատեգորիայի մեջ էլ («1» և «2») մտնում են նրանք, ում հիմնական զբաղմունքը հողի վրա աշխատանքն է՝ անկախ այն բանից, թե այն իրենց սեփականությունն է, թե ոչ: «3» և «4» տարբերակներում «տեղական» բառը պետք է հասկանալ բիզնես, որը գործում է տվյալ երկրի կամ նույնիսկ տվյալ մարզի (քաղաքի) սահմաններում՝ ի տարբերություն «միջազգային» բիզնեսի:

Հարց J9
Այս հարցում մեզ հետաքրքրում է հարցվողի ”զուտ” եկամուտը, այսինքն հարցվողի իրական եկամուտը:

Հարց J10

Սա ներառում է այսպես կոչված «ապառիկ տեղում» կամ «վճարման պլան» երևույթները, որը խանութն առաջարկում է կահույք կամ երկարատև սպառման ապրանք գնելիս:

ԲԱԺԻՆ P: ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐ

Հարց P2
Ազգային քաղաքականությունը վերաբերվում է երկրի քաղաքական իրադարձություններին, անդրադարձնելով ամբողջ երկրի քաղաքական զարգացումները (Ազգային ժողով, գործադիր կառավարություն, նախարարներ). Այս իարադարձությունները չեն առնչվում միջազգային իրադարձությունների հետ և կենտրոնացած են ազգային կարևորության հարցերի շուրջ:

Հարց P3
Տեղական քաղաքականությունը վերաբերվում է տվյալ տեղանքի կամ բնակավայրի քաղաքական զարգացումներն անդրադարձնող քաղաքական իրադարձություններին (օր.՝ քաղաքապետի որոշումները). Այս իրադարձություններն ունեն տեղական կարևորություն:

Հարց P4
Այս հարցի դեպքում, յուրաքանչյուր հարցման ժամանակ Դուք պետք է կատարեք ինստիտուտների ռոտացիա, այսինքն #1 հարցազրույցը սկսել #1 հարցից (Բանակ), #2 հարցազրույցը սկսել #16 հարցից (Միացյալ ազգեր), #3 հարցազրույցը սկսել #1 հարցից (Բանակ), #4 հարցազրույցը սկսել #16 հարցից (Միացյալ ազգեր) և այլն: Ռոտացիոն կողը **պետք է** գրանցվի բոլոր հարցաթերթերում:

Հարց P6a և P6b
Մի ընթերցեք հարցաթերթում առկա տարբերակները. հարցվողը պետք է հարցին պատասխանի առանց ձեր կողմից օգնության:

Բաժին D: ՌԵՍՊՈՆԴԵՆՏԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հարց D1
Դուք <u>չպետք է</u> կարդաք հարցաթերթում առկա տարբերակները: Այս հարցի միայն մեկ պատասխան կարելի է ընդունել:
<u>Վրաստանում</u>, եթե հարցվողը պատասխանում է «մինգրել» կամ «սվան», ապա շրջանակի մեջ առեք «վրացի» բառը (ծածկագիր «3»), քանի որ մեգրելն ու սվանը այլ էթնիկ խմբեր չեն:

Հարց D2
<u>Վրաստանում</u>, եթե հարցվողը պատասխանում է մինգրելական կամ սվանական լեզու, ընդգծեք այլ լեզու (ծածկագիր «6»):

Հարց D3
Այստեղ գրեք հարցվողի՝ պաշտոնական կրթության համակարգում ուսումնառության տարիների թիվը (կրթական հաստատությունում հարցվողի անցկացրած տարիների թիվը)՝ սկսած տարրական դպրոցի առաջին դասարանից մինչև իր ավարտած կրթական ամենաբարձր մակարդակը:

Եթե կրթության ստանալու ընթացքում ընդհատում է եղել, ապա այդ ընդհատումը չպետք է հաշվի առնել: Օրինակ, եթե հարցվողն ավարտել է միջնակարգ դպրոցի 9-րդ

դասարանը, իսկ այնուհետև՝ տեխնիկումի ևս երեք տարիները, ապա պատասխանը կլինի՝ (9+3)=«12 տարի»: Եթե անձը միջնակարգ դպրոցում սովորել է 11 տարի՝ 1989-1990թթ. և միջնակարգն ավարտելուց անմիջապես հետո կրթությունը շարունակել ԲՈՒՀ-ում ևս 5 տարի՝ 1990-1995թթ., ապա կրթության վրա ծախսված տարիների ընդհանուր թիվը կկազմի (11+5)=«16 տարի»:

Մյուս կողմից, եթե անձը միջնակարգ դպրոցում սովորել է 11 տարի՝ 1989-1990թթ., այնուհետև սկսել է աշխատել և 4 տարի աշխատելուց հետո ԲՈՒՀ է ընդունվել, որտեղ սովորել է ևս 6 տարի՝ 1994-2000թթ., ապա կրթության վրա ծախսված տարիների ընդհանուր թվի մեջ չպետք է հաշվի առնել այն 4 տարիների ժամանակամիջոցը, երբ այդ անձը աշխատում էր և չէր սովորում. փոխարենը, այդ անձի կողմից կրթության վրա ծախսած տարիների ընդհանուր գումարը կկազմի (11+6)=«17 տարի»:

Իսկ միջնակարգ դպրոցում 11 տարի սովորած մարդու համար, որը դպրոցն ավարտելուց անմիջապես հետո 5 տարի սովորել է ԲՈՒՀ-ում և այնուհետև ևս 4 տարի՝ ասպիրանտուրայում, կրթության վրա ծախսված տարիների ընդհանուր թիվը կկազմի (11+5+4)=20 տարի:

Ձեզանից ակնկալվում է այստեղ գրանցել միայն **տարիների հանրագումարը** և ոչ թե այն բաժանել միջնակարգ և միջնակարգից հետո ստացած կրթության տարիների:

Այս հարցում մեզ հետաքրքրում է միայն կրթության վրա ծախսված տարիների ընդհանուր թիվը, անկախ այն բանից, թե հարցվողը համապատասխան աստիճան ստացել է, թե ոչ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ այստեղ **չի կարելի** նշել ժամանակային միջակայքեր (օր.՝ 10-12 տարի), այլ պետք է գրել մեկ թիվ, որն արտացոլում է հարցվողի՝ կրթության վրա ծախսած տարիների ընդհանուր թիվը:

Հարց D4, աղյուսակ D4
Այս հարցը տվեք **տող առ տող** և յուրաքանչյուր շարքի համար ընդունեք միայն մեկ պատասխան: Եթե հարցվողը համապատասխան թեմայից (ոլորտից) որևէ հիմնական գիտելիք չունի, ապա շրջանակի մեջ առեք «0»-ն:

Հարց D14
Այստեղ ի նկատի է առնված հարցվողի՝ այս կամ այն կրոնին պատկանելը, ոչ թե պաշտոնական անդամակցությունը:

Հարց D16
«Կրոնական ծառայություններ» նշանակում է պաշտոնական կրոնական ծառայություններ (ծիսակատարություններ):

Բաժին Ա. Տնային տնտեսության ընդհանուր բնութագիրը

Տնային տնտեսության սահմանումը: Խնդրում ենք ուշադիր կարդալ այս բաժնի սկզբում տրված տնային տնտեսության սահմանումը և կիրառել այն ամբողջ հարցազրույցի ընթացքում: Այս հետազոտության ժամանակ կա երկու նախապայման, որոնց առկայությունն է կազմում տնային տնտեսություն.

1) Մարդիկ, որոնք ներկայումս միասին են ապրում
2) Մարդիկ, որոնց եկամուտն ու ծախսերն ընդհանուր են

Միայն այս <u>երկու</u> պայմանների առկայության դեպքում կարող ենք ունենալ տնային տնտեսություն: Եթե այս պայմաններից ՈՐԵՎԷ մեկն առկա չէ, դա չի կարող համարվել տնային տնտեսություն:

Հարց A1
Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ ներկա միգրանտները (տնային տնտեսության նախկին անդամները, ովքեր այլևս չեն ապրում տնտեսությունում կամ չեն ապրել անցած 3 ամսվա ընթացքում) հաշվի կառնվեն հետագայում: Այստեղ մեզ հետաքրքրում են միայն այն մարդիկ, ովքեր հարցազրույցի ժամանակ ֆիզիկապես ներկա են տնային տնտեսությունում ոչ պակաս, քան 3 ամսվա ընթացքում և ովքեր կվերադառնան առաջիկա 3 ամսվա ընթացքում:

Հարցվողի մասին ինֆորմացիան լրացրեք **Աղյուսակ A1-ի** առաջին սյունում: Հարցաթերթում հարցվողին ուղղվող հարցերը վերջանում են «R» մեծատառով (օրինակ՝ A3_ R, A4_ R և այլն, մինչև հարց A10_ R): ÜÙ³Ý³å»ë, Ñ³ñóíáÕÇ ï/ï-Ý ³Ý¹³ÙÝ»ñÇÝáõÕÕíáÕ Ñ³ñó»ñÁ í»ñç³ÝáõÙ »Ý §H¦ Ù»Í³ï³éáí (օրինակ՝ A3_ H, A H _ Rև այլն). տ/տ-ն անդամներին հարցը տալ միայն հարցվողին ուղղված բոլոր հարցորի պատասխանները գրանցելուց հետո (**Աղյուսակ A1-ի** առաջին սյունն ամբողջությամբ լրացված է): ºÃ» ï/ï-Ý, áñï»Õ Ñ³ñóáõÙ »ù Ï³ï³ñáõÙ, Ï³½ÙÍ³Í ¿ Ù»Ï ³Ý¹³ÙÇó ¸áõù <u>ÙÇ³ÛÝ</u> å»ïù ¿ Ñ³ñóÝ»ù «R» մեծատառով վերաջացող հարցերը: Եթե հարցվող տ/տ-ը կազմված է մեկից ավելի անդամներից, ապա սկզբում և <u>հարցման ընթացքում միայն մեկ անգամ</u> պետք է հաջորդաբար հարցնեք բոլոր «R» մեծատառով վերջացող հարցերը, և Աղյուսակ A1-ի առաջին սյան լրացման ավարտից հետո միայն ï/ï-Ý ÙÛáõë ³Ý¹³ÙÝ»ñÇÝ տալ §H¦ Ù»Í³ï³éáí í»ñç³óáÕ Ñ³ñó»ñÁ:

Կարող են լինել դեպքեր, երբ ձեր անցկացրած հարցազրույցին մասնակցող տնային տնտեսությունը տնտեսապես սերտորեն կապված է մեկ այլ տնտեսության հետ, բայց այդ տնտեսությունները միասին չեն ապրում (առավել «դասական» օրինակը գյուղական շրջաններում ապրող իրենց ծնողներից աջակցություն ստացող, մեծ քաղաքներում ապրող ուսանողներն են): Սույն հարցման շրջանակում <u>սրանք երկու տարբեր տնտեսություններ են</u>, քանզի ներկայումս նրանք ամբողջ ընթացքուվ միասին չեն ապրում, կամ ժամանակավորապես կամ մշտապես:

Հարցեր A1-A10_H
Այս հարցերի պատասխանները գրանցվում են **Աղյուսակ A1**-ում (էջ 4), համապատասխան սյունակում, տող առ տող: <u>Տվյալ տնտեսությունում ներկա պահին չբնակվող, ավելի քան 3 ամիս տնտեսությունից դուրս գտնվող անդամը չի կարող գրանցվել այս աղյուսակում:</u>

Այս աղյուսակի լրացման ընթացքում ուշադիր հետևեք ցուցումներին և համոզվեք, որ հարցերը ճիշտ հաջորդականությամբ եք ընթերցում: Պահպանեք սյուների հաջորդականությունը, նույնիսկ եթե հարցվողը պատասխանում է այլ հաջորդականությամբ: Խնդրեք նրան հետևել հարցերի հաջորդականությանը. բացատրեք հարցվողին, որ Ձեզ համար շատ կարևոր է հետևել հարցաթերթում տպված հարցերի հաջորդականությանը:

ՔԱՐՏ A2
Այստեղ ծածկագիր «1»-ը բացակայում է, ինչպես հարցաթերթում է նշված, հարցվողը նախապես կոդավորված է **Աղյուսակ A1-ում:** Քարտը սկսվում է ծածկագիր «2»-ից և սա սխալմունք չէ:

Հարց A4
Այս հարցի համար մենք օգտվում ենք ՔԱՐՏԻՑ (ՔԱՐՏ A4), սակայն այդ քարտն օգտագործեք **միայն** համոզվելուց հետո, որ հարցվողը չի հիշում տ/տ-ն անդամի ծննդյան թիվը: Ամեն կերպ աշխատեք իմանալ տարեթիվը, միայն դրանից հետո օգտագործեք ՔԱՐՏԸ:

Հարց A6
Ասելով Թերի միջնակարգ կրթություն (տարբերակ 3) ի նկատի ունենք, որ անձը միջին կամ ավագ դպրոցում է և դեռ չի ավարտել ծրագիրը: Նմանապես Թերի բարձրագույն կրթությունե ասելով (տարբերակ 6) ի նկատի ունենք, որ անձը դեռ սովորում է բուհում և չի ավարտել համապատասխան ծրագիրը: «Բարձրագույն կրթություն» (տարբերակ 7) ասելով հասկանում ենք միջնակարգ դպրոցից հետո ստացած բուհական որևէ կրթություն՝ լինի դա մասնագետի, բակալավրի, թե մագիստրոսի որակավորմամբ: Սակայն սա տարբերվում է «հետբուհական աստիճանից» (տարբերակ 8), որը համարժեք է թե՛ «*գիտությունների թեկնածուի»* և թե՛ *«գիտությունների դոկտորի»* աստիճաններին:

Հարց A7

Այս հարցը վերաբերում է միայն 14 տարեկան և բարձր անդամներին, քանի որ չի ակնկալվում, որ 14–ից փոքր երեխաներն աշխատում են և իրենց եկամուտը տուն բերում: Այսպիսով, խնդրում ենք ստուգել **A1 Աղյուսակի** A 4 սյունակը և տվեք **A7** հարցը, երբ գրանցված տարեթիվը մինչ 1995թ. է: Մի ուղղեք այս հարցը եթե A 4 սյունակի տարեթիվը 1996-2009-ի միջև է. աղյուսակի համապատասխան վանդակը բաց թողեք:

«Զբաղված եմ» ասելով հասկանում ենք ոչ միայն որևէ գործատուի հետ գրավոր պայմանագրի վրա հիմնված պաշտոնական զբաղվածությունը, այլև տնային տնտեսության անդամի կողմից կատարվող որևէ տեսակի աշխատանք, այդ թվում՝ ոչ պաշտոնական պայմանավորվածությունները, որոնց համար նրան վճարում են: Այս ենթատեքստում ինքնազբաղվածությունը նույնպես համարվում է զբաղվածության ձև, որովհետև ինքնազբաղ մարդը նույնպես աշխատում և եկամուտ է ստանում: Այսպես, օրինակ, զարդեղենի առևտրականները, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղներն ու եկամուտ ստացողները համարվում են զբաղված:

Ովքեր որ ծառայության մեջ են, համարվում են աշխատող միայն եթե պայմանագրային աշխատող են: Եթե նրանք պարտադիր ծառայության մեջ են նրանք ՉԵՆ համարվում աշխատող:

Հարց A8
Այս հարցում մենք հետաքրքրված ենք հարցվողի ցանկացած աշխատանքի զբաղվածության չափով՝ ներառյալ ինքնազբաղվածությունը:

Հարց A9
Այս հարցը վերաբերվում է տնտեսության այն անդամներին ովքեր 16 տարեկան են կամ բարձր, քանի որ չի ակնկալվում, որ 16 տարեկանից փոքրերը ամուսնացած են: Այդ պատճառով, ստուգեք **Աղյուսակ 1-ի** A4 սյունակը և տվեք A9 հարցը, երբ գրանցված տարեթիվը մինչը 1993 թ. է: Մի ուղղեք այս հարցը եթե A4 սյունակի տարեթիվը 1993-2009-ի միջև է. աղյուսակի համապատասխան վանդակը բաց թողեք:

Խնդրում ենք հաշվի առնել, որ մենք օգտագործում ենք տարբեր կատեգորիաներ, «ամուսնացած» տերմինի համար՝ համապատասխան քարտում (ՔԱՐՏ A9), և կցանկանայինք, որ հարցվողերն ասեն, թե իրենք և իրենց տնտեսության անդամները հատկապես ինչպես են ամուսնացել, այսպիսով մի ընդունեք պատասխան «ամուսնացած»-ի փոխարենը խնդրեք, որ ընտրեն տարբեակներից մեկը '2', '3' կամ '4':

Այս ՔԱՐՏՈՒՄ '7' տաևբերակը ("բաժանված") նշանակում է, որ զույգը նախկինում է ամուսնացած եղել (կամ քաղաքացիական ամուսնությամբ կամ եկեղեցական ծիսակատարմամբ, կամ երկուսն էլ), բայց որոշել են բաժանվել, այլևս միասին չապրել. բաժանումը դեռևս ամուսնալուծություն չէ, և զույգը կարող է միանալ կրկին, բայց այս պահին դա փաստացի ամուսնություն չէ (չնայած նրանք դեռ օրենքով ամուսնացած են): Նրանք չեն կազմում մեկ տնտեսություն և չեն կիսում եկամուտ ու ծախսերը:

Խնդրում ենք հաշվի առնել, որ ամուսնական զույգը կարող է ապրել առանձին (օր.՝ ամուսիններից մեկը միգրանտ է), բայց քանի դեռ նրանք իրենց համարում են ամուսնացած և բաժանում են եկամուտներն ու (կամ) ծախսերը, ապա նրանք համարվում են ամուսնացած:

Բաժին C. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ Տնտեսական պայմանները և վարքագիծը

Հարց C1

«Սեփականատերեր» ասելով (տարբերակ '3'), ի նկատի ունենք, որ դա չի կարող լինել տնտեսության անդամ:

Կարող են լինել դեպքեր, երբ բնակարանը պետական սեփականություն է (օր.՝ բնակարանը դեռ սեփականաշնորհված չէ) կամ կացարանը պատկանում է այն ընկերությանը, որտեղ աշխատում է հարցվողը: Այսպիսի դեպքերում նշեք կոդ '4':

Հարցեր C2-C4

Խնդրում ենք հաշվի առնել, որ **C2-C4** հարցերը վերաբերում են տեղական իշխանությունների կողմից տրամադրվող <u>հանրային</u> ծառայություններին: Այս հարցերը չեն վերաբերում այն մասնավոր համակարգերին, որ մարդիկ կարող են անցկացրած լինել իրենց տներում, սեփական ծախսերով: Ասելով « ծառայություններ, որոնք ստանում է ձեր տնային տնտեսությունը» ի նկատի ունենք այն, թե արդյոք տնտեսությունը տեխնիկապես միացված է այդ ծառայությանը՝ անկախ այն հանգամանքից, թե տնտեսությունն օգտագործում է տվյալ ծառայությունը, թե ոչ:

Աղյուսակ C2-ը անհրաժեշտ է լրացնել **սյունակ առ սյունակ**:
«Պարտք եղե՞լ է» (<u>սյունակ C4</u>), արտահայտությունը մատնանշում է վճարման վերջնաժամկետն անցնելուց <u>ՀԵՏՈ</u> դեռևս պարտք ունենալը: Եթե տնտեսությունը պարտավոր է վճարել, օրինակ, անցյալ ամսվա ջրի վարձը, բայց 5 օր դեռ ունի վճարումը կատարելու համար, ապա դա չի համարվում պարտք լինել:

Հարց C8a, C8b, C8c, Աղյուսակ C8

Առարկաների մասին հարցրեք <u>**տող առ տող**</u>. յուրաքանչյուր առարկայի կապակցությամբ գրեք համապատասխան ծածկագիրը, գրանցեք հարցվողի տնային տնտեսությանը պատկանող պարագաների թիվը, և տնտեսության սեփականությունը հանդիսացող բոլոր առարկաների կապակցությամբ գրեք այդ առարկաներից ամենանորի ձեռքբերման տարին:

Մեզ հետաքրքրում են միայն այն առարկաները, որոնք նորմալ աշխատանքային վիճակում են և օգտագործվում են տնտեսությունում, այնպես որ, եթե տնտեսությունն

ունի, օրինակ, չաշխատող սառնարան, ապա այն նշվում է որպես ծածկագիր «2» («Ոչ») և մենք չենք տալիս այլ հարցեր դրա վերաբերյալ:

Աղյուսակ C8-ը լրացնելիս խնդրում ենք հաշվի առնել, որ նշանակություն չունի, թե ձեռք բերված առարկան արդյոք օգտագործված է, թե նոր, արդյոք այն ձեռք է բերվել կանխիկ դրամով, թե վարկով կամ թե արդյոք վարկն ամբողջությամբ փակված է, թե ոչ: Մեզ հետաքրքրողն այն է, թե արդյոք տվյալ առարկան տնտեսության սեփականությունն է, թե ոչ, և եթե այո, ապա՝ երբվանից:

Սակայն որոշ դեպքերում կարող է այնպես լինել, որ տնտեսությունը ոչ թե գնել, այլ նվեր է ստացել ինչ-որ բան կամ այն ձեռք է բերել փոխանակման միջոցով: Նման դեպքերում օգտագործեք «9997» ծածկագիրը:

Հարց C10
Այս հարցը հիմնվում է միայն տնային տնտեսության ընկալման վրա: Նշանակություն չունի՝ արդյոք տնտեսությունն ամեն օր միս է սպառում կամ թե արդյոք տնտեսության անդամների կարծիքով իրենք բավականաչափ միս չեն օգտագործում և ստիպված են սահմանափակել սպառումը. ամեն դեպքում պետք է գրանցել այն, ինչ ասվում է:

Սակայն եթե տնտեսությունը որևէ սննդատեսակ չի օգտագործում (ասենք՝ բուսակերներ են), ապա տվյալ տնտեսության կողմից չօգտագործվող սննդատեսակի առումով օգտագործեք «97» ծածկագիրը:

Այս հարցում կարևոր չէ թե հարցվողը որտեղից է ձեռք բերում սպառման ապրանքներ, լինի դա գնված կամ աճեցված նրանց կողմից: Մենք ցանկանում ենք իմանալ արդյուք տ/տ-ը սահմանափակում է այդ ապրանքների սպառումը, թե ոչ:

Հարց C11a
Այստեղ հարցնում ենք տնտեսության ցանկացած տեսակի դրամական խնայողությունների մասին, ներառյալ կանխիկ գումար, բանկային հաշիվ, և այլն: Մենք չենք մասնավորեցնում քանակը, «խնայողություն»-ը դա ցանկացած այն գումարն է, որն ընտանիքը մի կողմ է դրել և ժամանակավորապես մտադիր չէ ծախսել:

Հարց C11b
Եթե տնտեսության անդամներին թույլատրվել է սնունդ գնել հարևան խանութից և վճարել դրա համար ոչ թե անմիջապես այլ օրեր կամ շաբաթներ հետո, դա նույնպես համարվում է պարտք այս հարցի շրջանակներում:

Հարց C12
Այս հարցը վերաբերում է տնային տնտեսության տարեկան եկամուտի աղբյուրներին: Ազատ վանդակ չթողնել Աղյուսակ C12.

Հարցեր C14 և C15
Այս հարցերը վերաբերում են ոչ միայն հարցվողների, այլ ամբողջ տնային տնտեսության ընդհանուր ամսական եկամտին: Այսպիսով, հարցվողին խնդրվում է հաշվարկել իր տնտեսության բոլոր անդամների եկամուտը:

Հարցեր C22 և C23
Այս հարցերը նույնպես հիմնվում են զուտ հարցվողների ընկալումների վրա և վերաբերում են տնային տնտեսությունների տնտեսական կարգավիճակի (և ոչ թե իրենց կրթական, սոցիալական կամ որևէ այլ կարգավիճակի)՝ իրենց գնահատականին:

Հարց C25
Այս հարցը վերաբերվում է այն եկամուտին, որ ըստ հարցվողի կապահովի նորմալ կյանք իր տնտեսության համար: Մի պարզաբանեք, թե ինչ է նշանակում «նորմալ» այս դեպքում մենք թույլատրում ենք, որ հարցվողն ինքը պարզանբանի «նորմալ» կյանքի իր ընկալումը (չնայած, որ մենք չենք ասում նրանց բացատրել այդ ընկալումը մեզ համար):

Հարց T3
Հարցազրույցի ավարտին, **T3-ում** գրանցեք հարցազրույցի ավարտման ժամը:

ԶՐՈՒՑԱՎԱՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎ

Հարցեր W1-W11
Այս ձևաթուղթն անպայման լրացրեք անհատական հարցազրույցի ավարտից անմիջապես հետո:

Հավելյալ դիտողություններ/նկատառումներ ունենալու դեպքում թղթի վրա նշեք և տեղեկացրեք դաշտի ղեկավարին կամ ՀՌԿԿ-ի Հայաստանյան գրասենյակ:

Ուշադրություն!

Դաշտային աշխատանքներում ծագած ցանկացած դժվարությունների դեպքում խնդրում ենք հաղորդակցվել Ձեր դաշտային ղեկավարի հետ:

[Անուն]

Հեռ.: XX XX-XX-XX

* * *

Հետադարձ կապ:

[Անուն]

Հեռ.: XX XX-XX-XX

էլ.փոստ: xxxxxxxxxxx